

## ԱՆԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

(Ծար. «Քազմավէպ», 1996, էջ 254-271)

Մոնղոլների գերիշխանութիւնն ընդունած Զաքարեանները թէեւ որոշ ընդհատումներով Անի քաղաքում պահպանում են իրենց իշխանութիւնը, սակայն այդ ժամանակից սկսած Անին աստիճանաբար վայրէջք է ապրում: Քաղաքի եպիսկոպոսութիւնը եւս կորցնում է իր նախակին առաջատար դերը, իսկ այդ դարավերջին Հայոց եպիսկոպոսական աթոռների մէջ կրկին իր աւագութիւնն է վերականգնում Սիւնեաց հնաւանդ Աթոռը<sup>58</sup>, բարգաւաճում են նաեւ Հաղբատի, իսկ աւելի ուշ՝ Բջնիի եպիսկոպոսութիւնները:

Անիի ու նրա շրջակայքի մոնղոլներից կրած աւերածութեան հետեւանքները բաւական խորն են եղել: Մասնաւորապէս, նրանց ներխուժումից տաս տարի անց՝ Հոռոմոսում Աշոտ Դսեղցու նուկիրատուական արձանադրութեան մէջ կարդում ենք. «ՈՂԵ (1246) ... ի քագաւորութեան Հայոց եւ Վրաց Դաւթի եւ ի սպասալարութեան Շահնշահի որդոյ մեծին Զաքարի եւ յառաջնորդութեան տեառն Բարսղի արքեպիսկոպոսի որդոյ Ամիր Նրկարայ. ես Աշոտ Դսեղեցի... միարանեցայ Սուրբ Յովանիսի ի նեղ եւ ի չար ժամանակիս, յետ կործանման տաճարին, մինչ էր վանքս ի նեղութեան, ետու զամենագով Աւտարան... եւ այլ զինչ Աստուած պատրաստէ: Ես տէր Բարսեղ եւ Սարգիս վարդապետս եւ այլ եղբարքս ընկալաք զնա իրեւ ոմի ի պատրոնաց

58. Այս առջնութեամբ Մ. Օրմանեանը գրում է. «Ժամանակէ մը ի վեր Անիի եպիսկոպոսներն էին, որ գերագոյն դիրք ստացած էին Հայաստանի մէջ, մինչ հնաւանդ սովորութեամբ Սիւնեաց եպիսկոպոսն էր, որ Ախսաքոռ դիրք ուներ Հայ եպիսկոպոսութեամ մէջ: Բայց Անին հետզինեւ կորուած էր իր կարեւորութիւնը, եւ Սիւնիքի դիրքը նորէն բարձրացած էր Օրբելիաններում՝ Միքատի և Տարայինի շնորհիւ: ՕՐՄԱՆԵԱՆ Մ., չշ. աշխ., էջ 1701:

մերոց...»<sup>59</sup>: Բարսեղը յիշւում է նաեւ Հռոռմոսի 1247, 1250, 1251 եւ 1253ի նուիրատուական արձանագրութիւններում<sup>60</sup>: Սակայն, նրա տոհմական ճիւղը Անիի հոգեւոր իշխանութեան մէջ այլեւս չի՝ շարունակւում, մինչդեռ Աբուղամրենց (Մագիստրոսենց) ճիւղն ունեցել է անմիջական շարունակութիւն՝ յանձինս Գրիգոր Ա.ի որդի Սարգիս Բ. եպիսկոպոսի («տէր Սարգիս, որդի Սաքիստրոսին»)<sup>61</sup>: Նրա եղբայր Աբուղամրը («որդի Սաքիստրոսին») յիշւում է Բագնայրի 1261 եւ 1262ի. արձանագրութիւններում<sup>62</sup>: Սրա որդին էր ԺԳ. Պարի Վերջերին Անիի եպիսկոպոս դարձած Յովհաննէսը: Մարմաշէնի մի արձանագրութիւնից երեւում է, որ Սարգիս Բ.ի եւ Աբուղամրի «իշխան Վահրամ» եղբայրը վաղ է մահացել՝ «կիսաւրեայ ժամանակու կոխի [եցաւ առ Աստուած]»<sup>63</sup>:

Սարգիսը, որպէս Անիի եպիսկոպոս, ինչպէս վերը նշեցինք, առաջին անգամ յիշւում է 1245ին, երբ ա'յլ եպիսկոպոսների պէս ընդունել է կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու շրջաբերականը բերող Վարդան վարդապետին: Սակայն, մինչեւ այս եպիսկոպոսի գործունէութեանն անդրադառնալը հարկ է մի քանի խօսք ասել վերոյիշեալ շրջաբերականի մասին, մանաւանդ, որ այն իր ուղղակի արտայայտութիւնն է գտնել Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի արձանագրութիւններից մէկում:

Հռոմկլայում աթոռակալող Կոստանդին Բարձրբերդցին անհանգստացած Հայոց եկեղեցիների զգալի մասում տիրող անկանոն իրավիճակից, հոգեւորականութեան մի մասի թերացումներից, 1243ին, Հեթում Ա. թագաւորի կամակցութեամբ Սսում գումարում է եկեղեցական ժողով Կիլիկիայի բարձրաստիճան հոգեւորականութեան մասնակցութեամբ: Քանի որ Հայաստանցիներին հրաւիրելու հնարաւորութիւն չկար, ժողովն ընդունում է եկեղեցական կեանքը կարգաւորող 25 կէտից բաղկացած մի որոշում՝ «Սահմանք կանոնականք», որի սկզբում կաթողիկոսը զետեղում է Հայաստանի եկեղեցիներին ու հոգեւորականութեան հասցէագրուած իր ուղերձը: Այստեղ նա նշում է, որ մտաղիր էր անձամբ այցելել գաւառները, բայց չի՝ կարողացել, ուստի ուղարկում է շրջաբերականը, որպէսզի տեղում հոգեւոր

59. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. ն., նշ. աշխ., էջ 154:

60. Նոյն տեղում, էջ 146, 154, 156, 157:

61. Դիւան..., էջ 19:

62. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. ն., թշ. աշխ., էջ 186, 188:

63. И. ОРБЕЛИ, նշ. աշխ., էջ 447, ԱԿԻՆԵԱՆ Հ. ն., նշ. աշխ., էջ 401:

պետերը ստորագրութեամբ հաստատեն ժողովի ընդունած կանոնները եւ դրանցով առաջնորդուեն<sup>64</sup>: Կաթողիկոսի պատգամաբեր Վարդան Արեւելցին Հայաստան է գալիս 1245ին, շրջում է անհրաժեշտ տեղերը եւ եպիսկոպոսներից ու վանահայրերից հաւանութեան ստորագրութիւններ հաւաքում՝ «Եւ Եկեալ Վարդապետն Վարդան... շրջել ընդ գաւառու Հայոց, յեպիսկոպոսս եւ ի վանորայս եւ յիշխանս եւ ոռուեալ ամենեցուն գիրամանս կանոնականս եւ պահանջել յամենեցունց ձեռագիր հաւանութեան սահմանին եղելոյ: ... ետուն ձեռագիր երդմամբ... եպիսկոպոսն Կարենյ Էպաղաքիս Սարգիս, եւ եպիսկոպոսն Կարուց Յակոբ, եւ եպիսկոպոսն Բջնոյ՝ Վաճական եւ Գրիգոր, եւ եպիսկոպոսն Անքերդրոյ՝ Մկրտչին, եւ եպիսկոպոսն Հաղրատայ Համազասպ եւ այլ եպիսկոպոսն... եւ զիսաւոր Վանորայքն՝ Սանահինն, եւ Գետիկ, եւ Հաղարծինն, եւ Կեչառուս, եւ Հաւոց Թառ, եւ Այրի վանք, եւ Ցովհաննու վանք եւ Սաղմոսայ վանք, եւ Հոռոմոսի վանք, եւ որ շուրջ զնոնօք»<sup>65</sup>:

Բուն կանոնները, որոնց 25 կէտերը Մ. Օրմանեան բաժանում է հինգ հիմնական խմբի (կանոնական, բարեկարգական, բարոյական, քահանայից, զիջողական)<sup>66</sup>, նպատակ ունէին եկեղեցին ու նրա սպասաւորներին զերծ պահել անօրինականութիւններից ու չարաշահումներից, վերականգնել եկեղեցական կեանքի կանոնականութիւնն ու բարոյական չափանիշները: Անիում խնդիրը միայն եպիսկոպոսի տուած ստորագրութեամբ չի աւարտում, այլև Շահնշահ Ա.ի ցուցումով Մ. Առաքելոցի պատին փորագրուում է հետեւեալ արձանագրութիւնը. «Թուականին Զ (1251) շնորհիւն Աստուծոյ եւ երամանաւն տեառն Կոստանդնեայ Հայոց կաթողիկոսի եւ մեծին ամիրսպասալար Շահնշահի արձանագրեցաւ Առաքելական կանոնին, որ թէ ո՞ք յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց կաշառաւք կամ անմիրու երեց առնեէ, կամ առանց նշտիւ եւ յոյժ ընարութեան, դատի յԱստուծոյ, եւ ընդ նզովաւք լիմի յերիս սուրբ ժողովոյն...»<sup>67</sup>: Այստեղ իրենց արտայայտութիւնն են գտել Կոստանդինի շրջաբերականի առաջին եւ չորրորդ կէտերը, որոնցից մէկում ասւում է, թէ միայն արժանաւորները պէտք է ձեռնադրուեն եւ «առանց արծաքոյ», իսկ միւսում պահանջուում է, որ նրանք համապատասխան պատրաստութիւն ունենան «ուսմամբ եւ սըր-

64. ԿիրԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 303:

65. Նոյն տեղում, էջ 310:

66. ՕՐՄԱՆԵԱՆ Մ., նշ. աշխ., էջ 1627-1633:

67. Դիւան.... էջ 15:

բութեամբ», ձեռնադրուելիս քահանաները քսանհինգ եւ սարկաւագները՝ քսան տարեկանից պակաս չինեն<sup>68</sup>: Անիի արձանագրութեան հեղինակները տարիքային մանրամասներ չեն շեշտում, այլ բաւարարում են «անմիրու» ձեւակերպմամբ: Սակայն, աւելի ուշագրաւէ, որ ո՛չ արձանագրութեան սկզբում, ո՛չ էլ վերջում չի' նշտում քաղաքի եպիսկոպոսի անունը, որ թուում է թէ, պէտք է միանար կաթողիկոսի յորդորին<sup>69</sup>: Այստեղ տեղին է յիշել Գանձակեցու այն վկայութիւնը, թէ կաթողիկոսի նուիրակ Վարդան Արեւելցուն այնքան էլ ջերմօրէն չընդունեցին վարքի մէջ թերացած եպիսկոպոսները, բայց եւ չհամարձակուեցին նրա պահանջը մերժել, այլ առերես ընդունեցին. «Եւ զի ամենայն ո՛ք խոտորեալ էր ի նշմարտութենէն՝ ըմբռնեալք ախտի ազահութեան եւ արծաթասիրութեան, ծանր բուեցաւ հրամանն (Կաքողիկոսին), բայց սակայն ոչ իշխեցին արհամարհել, այլ ի վերին երեսս մեծարեցին...»<sup>70</sup>: Անիում, ուր առեւտրական ու չարաշահական յարաբերութիւնների խորացմանը զուգահեռ տեղի էր ունենում բարքերի անկում եւ դրամը դառնում էր ամենազօր, բնական է, աւելի շատ պէտք է լինէին թերացուները եկեղեցու կանոնների նկատմամբ եւ այստեղ առաւել դըժկամութեամբ պէտք է ընդունէին կանոնական պահանջների ամէն մի խստացում ու բարոյախոսութիւն:

Վերայիշեալ արձանագրութիւնը, մեր կարծիքով, մի նոր վկայութիւն է պարունակում Անիում երկու եպիսկոպոսների գոյութեան մասին («... որ թէ ո՞ք յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց կաշառաւէ կամ անմիրու երէց առնել...»): Առաջին հայեացքից կարող է թուալ թէ որպէս առաջնորդներ նկատի են առնուած վանահայրերը՝ վանական միաբանութիւնների առաջնորդները, բայց այդ ժամանակ Անիի ու նրա մերձակայ վանքերի մեծագոյն մասում վանահայրեր էին վարդապետները, կամ աւագերէցները, որոնք, ըստ կարգի, քահանայ ձեռնադրելու իրաւունք չունէին, մի իրաւունք, որ պատկանում է եպիսկոպոսին<sup>71</sup>: Բացի այդ, արձանագրութիւնն անիում է գրուել եւ առաջին հերթին նկատի ունի քաղաքը, նրա եպիսկոպոսին ու

68. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 303-304:

69. Կոստանդնի շրջաբերականի հիման վրայ 1251ին համանման արձանագրութիւններ են գրուել նաև Մրենում եւ Բջնիում. առաջնում յիշում է վանահայր Գրիգորը, երկրորդում՝ տեղի եպիսկոպոսներ Վանականն ու Գրիգոր (ԿՈՍՏԱՆԴՆԵԱՆՑ Կ., Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 95-96):

70. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 310:

71. ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, Գիրք դատաստամի, էջ 292-293:

առաջնորդին, որոնց էլ վերապահուած էր երեց ձեռնազըելու իրաւունքը: Յատկանշական է, որ Կոստանդին կաթողիկոսի շըր-ջարերականի հիման վրայ 1251ին Մրենում գրուած նոյնիմաստ արձանագրութեան մէջ եպիսկոպոսի հետ առաջնորդ չի նշւում՝ «իբ-է ոք յեպիսկոպոսաց կաշառալք ե[րէց] առնէ, կամ անմիրու, կամ առանց ընտրութեան, մասն Յուրայի առցէ...»<sup>72</sup>:

Այժմ վերապառնանք Սարգիս Բ.ի գործունէութեան, որի անուան յաջորդ թուակիր յիշատակութիւնները գտնուամ ենք Բագնայրում՝ 1262ի երկու արձանագրութիւններում: Դրանցից մէկը Գարեգին երէցի, միւսը՝ Խոռոս կրտսերի նուիրատուական արձանագրութիւնն է: Առաջինը սկսում է հետեւեալ կերպով. «ԶԺԱ. (1262) ի վերադիտորութեան մայրաքաղաքին Անու տէր Սարգսի, տեառն տեղւոյս...»<sup>73</sup>, իսկ երկրորդում Սարգիսը («Ես տէր Սարգիս...») Բագնայրի վանահայր Աբրահամի եւ Յովսէփ փակակալի հետ պարտաւորուում է նուիրատուի համար համապատասխան պատարագներ մատուցել<sup>74</sup>:

Անիի Ս. Առաքելոցի որմերիս Սարգսի թողած բոլոր երեք արձանագրութիւններն անթուական են: Դրանցից մէկը գրուել է Սահիպ Դիւանի (Շամս իդ դին Մուհամէդ) պարոնութեան շրջանում (վերջինս հանդիսանալով մոնղոլական տէրութեան ամենազօրեղ պաշտօնեան 1267ին գնել է Անիի 1261ին մահացած Շահնշահ Ա.ի որդիներից)<sup>75</sup>: Արձանագրութեան մէջ Սարգիսը խօսում է «պասակի թոյլտուութիւնն ստանալու պարտաւորութիւնը հարսի հարազատներից վերցնելու եւ փեսայի հարազատների վրայ դնելու մասին»<sup>76</sup>, սահմանելով նոր կարգ. «...Ես տէր Սարգիս, որդի Մաքիստոսին զայս հաստատեցի. սահման եր.ի սկզբանէ, որ հարսն առնուր գիրամանն. շատ խեղն եւ անպատճի բան լիներ. զայս հաստատեցի, որ կորինն առնուր գիրամանն եւ այլ բռնապակ առնել ոչ ունի ոք իշխանութիւն...»<sup>77</sup>:

Ցաջորդ արձանագրութիւնը, ուր Սարգիսը յիշատակւում է որպէս Անիի առաջնորդ, վերը քննուած՝ երկրաշարժի վտանգի պատճառով փողոցում կիրակնօրեայ վաճառքն արգելող Միլիթար Տեղերցի եպիսկոպոսի արձանագրութիւնն է, որն ինչպէս

72. И. ОРБЕЛИ, *Надписи Мрена, «Հայագիտական հետազոտութիւններ»,*, Երևան, 1974, էջ 40, հմտ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Կ., նշ. աշխ., էջ 95:

73. ԱԱՐԳԻՍԵԱՆ Հ. Ն., նշ. աշխ., էջ 187:

74. Նոյն տեղում:

75. ՍԱՄՈՒԵԼ ԱՆԾՈՒ, Հաւաքմումք ի գրոց պատմագրաց, *Վաղարշապատ*, 1893, էջ 161:

76. ԱԻՍԳԵԱՆ Ս., Վիմական արձանագրութիւնների բառաքնների, Երեւան, 1978, էջ 162:

77. Դիւան..., էջ 19:

տեսանք, փաստօրէն հանդէս է գալիս որպէս քաղաքի երկրորդ եպիսկոպոս։ Արձանագրութիւնը գրուել է Փախրադինի մելիքութեան ժամանակ, բայց հետաքրքիր է, որ այստեղ Սարգիսը համարւում է նաեւ քաղաքի իրաւական իշխողը՝ «... ի տէրութեան եւ յառաջնորդութեան տէր Սարգսի եւ ի մելիքութեան Փախրադինին...»<sup>78</sup>։

Անմիջապէս այս արձանագրութեան տակ Սարգիսը թողել է մէկ ա'յլ արձանագրութիւն, որ թերի է ընթերցւում («Նորին Աստուծոյ եւ տէր Սարգսի եպիսկոպոս...»)<sup>79</sup>, բայց պահպանուած հատուածներից երեւում է, որ այն դարձեալ վերաբերում է ամուսնական հարցերի կարգաւորմանը։

Սարգիս Բ.ի մահուան թուականն անյայտ է։ Նրանից յետոյ Անիում յիշւում է Գրիգոր Բ. եպիսկոպոսը, որ ինչպէս պարզուում է Սարմաշէնի մի անթուական արձանագրութիւնից, Սարգսի եղբօր որդին էր<sup>80</sup>։ Յայտնի որ Սարգսի եղբայրներից մէկի՝ Արուղամրի որդի Յովհաննէսը յետագայում Անիի եպիսկոպոսը դարձաւ, հաւանական է թւում, որ Գրիգորը Սարգսի միւս եղբօր՝ իշխան Վահրամի որդին էր։

Գրիգոր Բ.ի Անիում թողած միակ արձանագրութիւնը (Ս. Առաքելոց եկեղեցի) գրուած է Փախրադինի պարոնութեան շրջանում՝ 1277ին՝ եւ վերաբերում է ամուսնալուծութեան դէպքում կողմերից իւրաքանչիւրին տրուող ունեցուածքի չափին։ Նշելի է, որ Գրիգորն իր որոշումը կայացրել է ոչ միայն փախրադինի, այլեւ քաղաքի քահանաների «կամակցութեամբ»։ Թուին ԶԻԶ (1277) Ծնորիկին Աստուծոյ եւ տէր Գրիգոր արքեպիսկոպոս մայրաքաղաքին Անտոյ, կամակցութեամբ պատրոն Փախրադինին եւ բահանայից բաղաքացէաց արանագրեցաւ ի վերայ եկեղեցւոյս։ Եթէ այր զիկն քողու Դ (4)իցն Ա. (1) զինչ բաժինք լինի տայ նմա. եւ թէ կին՝ գայրն՝ Դ (4)իցն Ա. (1) տայ յերիկն։ Եթէ ոք հակառակ կայ գրոյս, դատի յԱստուծոյ։<sup>81</sup>

78. Նոյն տեղում, էջ 24։ Անիի այս շրջանի քաղաքական պատմութիւնը թերի է ուսումնասիրուած, ուստի դժուար է ասել թէ ինչպիսի հանգամանքներում եւ ինչ չափով է Սարգիսը մասնակցել քաղաքի վարչական կառապաման։
79. Դիւան..., էջ 25։
80. «Նս տէր Գրիգորս եղբարորդի տեսան Սարգսի ետու զիմ սուրբ Յշամս ի սուրբ ուխտո Մարմաշինի եւ փոխարէն հատուցման զՎարդեվառին Քառասումնին եւ զԽաչութարէն մինչ ես կէմրամին եմ՝ տեսան Սարգսի. եւ յետ վախճանին՝ իմա», Ա. ՕՐԵԼԻ, Ազքանիւ երգական տրամադրութեան ծանօթ լինելով՝ կարծել է թէ Գրիգորը Սարգսի որդին է, Ակիննեան ն., նշ. աշխ., էջ 401։
81. Դիւան..., էջ 15։

Գրիգոր Բ. եպիսկոպոսի վերաբերեալ ա՛յլ տեղեկութիւններ չեն պահպանուել:

ԺԳ. դարի վերջերին եւ ԺԴ. դարի սկզբներին Անիի եպիսկոպոսն է եղել Մարգիս Բ.ի եղբայր Արքուղամբի որդի Յովհաննէս Ա.ը: Նրա անուան առաջին յիշատակութիւնը պահպանուել է 1298ի Անիի Ներքին բերդում Եղբայրիկ գրչի ձեռքով ընդօրինակուած եւ Արջոյ Առիճի վանքին ընծայաբժիւուած մի Աւետարանի յիշատակարանում, որի վերջում կարդում ենք. «... գրեցաւ սա ի քաղաքիս Անոյ, ի բերդս Ներքի կոչեցեալ... ի պարոնութեան ամիրսպասալար Շահնշահի եւ եպիսկոպոսութեան տեառն Ցոհաննիսի, ի տէրութեան Արջեւառնոյ Մագիստրոսսնց տէր Ցոհաննիսի եւ Ամիրին՝ որդոյ Փախրադինին»<sup>82</sup>: Երկրորդ անգամ Յովհաննէս եպիսկոպոսը յիշւում է «Բագնայրի Աւետարանում» Գէորգ Ներսիսանցի պատուէրով Գելանի որդի Ստեփանոսի գրած 1308ի արժէքաւոր յիշատակարանում՝ «... գրեցաւ յիշատակարանս... ԶԾԻ (1308) ամիս, ի հայրապետութեանս մերոյ նահանգիս Շիրակ գաւառիս՝ հեզի եւ մարդպամիրի տէր Ցոհաննիսի՝ որդոյ Ապիղամբրի՝ իշխեցող տեղոյս...»<sup>83</sup>:

Յովհաննէս առանձնակի գովեստով է յիշւում նաեւ 1313ի մէկ ա՛յլ Աւետարանի յիշատակարանում, գրուած Յակոր գրչի ձեռքով Շիրակի Մագվոյս կոչուած բնակավայրում. «... գրեցաւ... ի հայրապետութեան մայրաքաղաքիս Անոյ տեառն Ցոհաննիսի մեծի, որ է ջահ վառեալ ի մէջ եկեղեցւոյ եւ ի յազգէ Լուսաւորչին Հայաստանեայց»<sup>84</sup>:

Ուշագրաւ է, որ վերջին երկու յիշատակարաններում Յովհաննէսի վարած հոգեւոր իշխանութիւնը անուանում է «Հայրապետութիւն», իսկ նա ներկայացւում է, որպէս եռանդուն գործիչ: Յովհաննէսի եպիսկոպոսութեան շրջանում տեղի ունեցած եկեղեցական կեանքի կարեւոր իրադարձութիւններից էր 1307ի Սսի ժողովը: Այն հրաւիրել էին Կիլիկիայի Հեթում Բ. Ղատինամէտ թագաւորահայրը եւ տասնութամեայ Լեւոն Դ.ը, Գրիգոր Անավարզեցի Կաթողիկոսի յորդորով (Վերջինս մահացաւ մինչեւ ժողովի գումարումը), նպատակ ունենալով Արեւմուտքին դաւանաբանական զիջումներ կատարել՝ ուզմաքաղաքական օժանդակութիւն ստանալու ակնկալութեամբ: Մէկ

82. ԺԳ. դարի յիշատակարաններ, էջ 817-818: Այստեղ նշուած Արջոյ Առիճի հոգեւոր առաջնորդ «Մագիստրոսսնց տէր Ցոհաննէսը» հաւանաբար Յովհաննէս եպիսկոպոսի տոհմակիցն էր:

83. ՅՈՎԱՔՖԵԱՆ Գ., Յիշատակարանի..., էջ 891:

84. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ Կ., ԺԳ. դարի յիշատակարաններ..., էջ 110:

օրում աւարտուած այդ ժողովը, թագաւորի ու Հեթումի ճշնչմամբ ընդունում է Հայաստանեայց եկեղեցու դաւանարանութիւնը մերժող որոշումներ (անգամ՝ Քրիստոսի՝ «զերկու բնութիւնս եւ զկամս եւ զներգործութիւնս» եւ այլն): Ժողովի ու ժողովականների մասին պամող Կղեմես Կալանոսը որ նշում է, թէ հին վաւերագրերից է օգտուել, ներկայ եղած 26 եպիսկոպոսների անունների մէջ կիլիկեան ու սահմանակից շրջանների եպիսկոպոսներից բացի յիշատակում է չորս հայաստանցիների՝ «Յովիաննես» Մարանդունեաց, Կարապետ՝ Մեծկերտի, Վարդան՝ Անիի եւ Փիլիպպոս՝ Խորձեանի» եպիսկոպոսներին<sup>85</sup>: Ինչպէս տեսանք Անիի Յովհաննէս Ա. եպիսկոպոսը յիշում է 1298, 1308, 1313ին, իսկ Վարդան անունով Անիի եպիսկոպոս ա'յլ աղբիւրներից յայտնի չէ: Շատ հնարաւոր է սակայն, որ նոյն այս Վարդանն է 1320ի յիշատակուած Մրենում, ոմն իւանիկի արձանագրութեան մէջ («...պարոնութեամբ Սարգսի... եւ ի հայրապետութեան ի տէր Վարդան, ես իւանիկս...»)<sup>86</sup>: Հայաստանցի ժողովականների վերաբերեալ Մ. Օրմանեանը հետեւեալ դիտողութիւնն է անում. «Այս չորսերը (եպիսկոպոսները) Հայաստանի ներկայացուցիչներ պէտք է համարուէին, սակայն Մարանդունի գաւառ չունինք, միայն Մարանդ գիւղ մը կը գիտցուի, իսկ Անիի արքեպիսկոպոս ըսուածք, եթէ բուն Անիի արքեպիսկոպոսն ըլլար (ժողովականների ցանկում, Կ. Մ.) 25րդ տեղը չէր թողութք»<sup>87</sup>: Արդեօք յիշեալ Վարդանը Անիի երկրորդ եպիսկոպոսն էր՝ փոխանորդը, եւ կամ գուցէ Մարանդունիի եպիսկոպոս կոչուած Յովհաննէսը չփոթուած է Անիի նոյնանուն եպիսկոպոսի հետ: Երկրորդ ենթադրութիւնն անհաւանական է, քանի որ 1317ի Աղանայի ժողովում յիշում է Մարանդունեաց մէկ ա'յլ եպիսկոպոս (նշանակում է, այդպիսի թեմ եղել է, հաւանաբար ընդգրկելով Վասպուրականի Մարանդ գաւառը), իսկ Վարդանի՝ Անիի երկրորդ եպիսկոպոս եւ ժողովին ուղարկուած պատուիրակ լինելը միանգամայն հնարաւոր է: Սակայն, աւելի էական է, որ ո'չ նշուած Յովհաննէսը, ո'չ էլ Անիի Վարդանը ժողովի որոշման տակ չեն ստորագրել, բոլոր ժողովականների մէջ բացառութիւն կազմելով: Կալանոսը, որ սկզբում նշում է, թէ ժողովին մասնակցել է 26 եպիսկոպոս, այնուհետեւ գրում է որ նրա որոշումները հաստատել են 36 եպիսկոպոսներ, դրանց թևում յիշատակելով եւս 11 հայաստան-

85. ՕՐՄԱՆԵԱՆ Մ., նշ. աշխ., էջ 1785:

86. Ի. ՕՐԵԼԻ, Հածուս Մրենա, էջ 38:

87. ՕՐՄԱՆԵԱՆ Մ., նշ. աշխ., էջ 1785:

ցիների (Երզնկայի, Բաբերդի, Բասէնի, Կամախի, Սասունի, Օծովի եւ այլ վայրերի եպիսկոպոսներին): Այս կապակցութեամբ Մ. Օրմանեանն իրաւացիօրէն գրում է. «... աւելի մեծ տարրերութիւնը Հայաստանի եպիսկոպոսներուն մէջն է, որոնց մէ կը պակսին Մարանդունեաց եւ Անիի եպիսկոպոսները եւ աւելցուած են 11 նոր անուններ... Քանի որ ստոյգ բացատրութիւն չկայ, կրնանք ըսել, թէ պակաս եղողները չհաւնելով մեկնողներն են, իսկ աւելցուածներ՝ վերջէն հասնելով, կամ ձեռնադրուելու գալով՝ ստորագրելու պարտաւորուեր են»<sup>88</sup>:

Այն փաստը, որ ժողովի որոշման դէմ, չնայած թագաւորական ճնշմանը, հենց տեղում ընդդիմացողներ են եղել, երեսում է նաև Սովոքս Երզնկացի Վարդապետի վկայութիւնից, որ գրում է. «Նոյն ինքն ի տեղին բազում հակառակեցան եւ դեռ տակաւին եւս հակառակին...»<sup>89</sup>: Այսպիսով, անեցիներն այս անգամ եւս հաւատարիմ են մնացել իրենց նախնեաց որդեգրած աւանդութեան սկզբունքին (յիշենք Բարսեղ Բ. Անեցու անհաշտ ընդդիմութիւնը Հոռմէլայի դաւանական զիջողականութեան նկատմամբ): Իսկ Սսի ժողովը, որ Մ. Օրմանեանի դիպուկ բնութագրմամբ՝ թագաւորական պարտադրանքով կայացած «անգլուխ ու անկանոն համախմբում էր»<sup>90</sup>, մեծ վրդովմունք առաջացրեց Հայաստանում: Գուցէ այս է պատճառը, որ Անիի Յովհաննէս եպիսկոպոսը 1308 եւ 1313 թուականներին յիշատակուում է որպէս «Հայրապետ» ընդդեմով իր ինքնիշխանութիւնը Սսի Աթոռի նկատմամբ, մանաւանդ, որ նորընծայ կաթողիկոս Կոստանդին Դ. Կեսարացին Սսի ժողովի որոշումները տարածելու յանձնառուն դարձաւ, իսկ ընդդիմացողների շարքերը ստուարացան յանձին Սիւնեաց Աթոռի, Գլաձորի Վարդապետարանի ու Ժամանակի Հայոց նշանաւոր վարդապետների:

Յովհաննէս եպիսկոպոսի անուան վերջին անգամ Հանդիպում ենք Անիում, քաղաքի աւագ դրան մուտքից վեր տեղադրուած մեծ արձանագրութեան մէջ: Այն թուական չունի, բայց տեղեկացնում է, որ այդ ժամանակ Անին դարձել է մոնղոլական տէրութեան «խաս ինչու» (արքունի սեփականութիւն): Հատ Հ. Ժամկոչեանի Անին, «խաս իջու» է դարձել Արու Սայիդ խանի (1319-1335) ժամանակ<sup>91</sup>, հետեւաբար արձանագրութիւնն էլ էդ

88. Նոյն տեղում, էջ 1786:

89. ՍԱՄՈՒԵԼ ԱՆՆԾԻ, էջ 298 (Ճանօթագրութիւն):

90. ՕՐՄԱՆԵԱՆ Մ., նշ. աշխ., էջ 1791:

91. ԺԱՄԿՈՉԵԱՆ Հ., Անի քաղաքի ժԳ. դարի երկու արձանագրութիւնների մասին, Երեւանի պետական Համալսարանի գիտ. աշխատութիւններ, հտ. 47, 1955, էջ 109: Ցաւօք Անիի «խաս ինչու» դառնալու որոշակի թուականը

շրջանից պէտք է համարել: «Գթութեամբ մարդասիրին եւ անմահ Բանին Աստուծոյ եւ վասն յերկարկենդանութեան արքայից արքային աստուածադիր փաթշահին... որ եղեւ մայրաքաղաք Անի խասինջու, եւ ի տէրութեան քաղաքիս աստուածաւը պարոնացն Գրիգոր աղին եւ Յովաննիսի եւ յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի ողորմածն Աստուած հայեցաւ ի դժուարութիւն քաղաքիս եւ խորհուրդ բարի ծագեաց ի սիրտս պարոնացն Գրիգորի եւ Յովաննիսի, որ գեղաքս մեր նորոգեալ շինեցին եւ զամենայն հարկապահանջութիւն երարձին... եւ զԱթոռին հարկն, որ յետոյ ի չարաց դրած էր զկապալն յեպիսկոպոսէն բարձին, եւ յառաջին սահմանս դարձուցին»<sup>92</sup>:

**Սոյն արձանագրութիւնից ենելով որոշ ուսումնասիրողներ ենթադրել են թէ բազմաթիւ ա'յլ հարկերի թւում Անիում արհեստականօրէն ուռճացուած է եղել նաեւ եպիսկոպոսական աթոռին տրուող հարկը, որ եւ վերապարձուել է նախկին չափին, սակայն Ս. Աւագեանը համապատասխան քննութեամբ ցոյց է տալիս, որ խօսքը վերաբերում է Անիի Աթոռի՝ մոնղոլական տէրութեանը տրուած հարկի նուազեցման»<sup>93</sup>:**

Այստեղ հարկ է որոշ անդրադարձ կատարելով պարզաբանել եպիսկոպոսական աթոռի հարկատուութեան խնդիրը, որ ծագել է մոնղոլական տիրապետութեան շրջանում: 1269ին, Անիի տաղմածիները (հարկահաւաքները) հաւանօրէն իրենց պարոնի՝ Սահիպ Դիւանի ցուցումով Անիի քահանայական դասը՝ երիցանին ազտեղ են բաժ հարկից Ս. Առաքելոցի պատին արձանագրելով՝ «...բարձաք ի յԱնու իրիցանուս գրածն, զոր ի սկզբանէ ազատ էր»<sup>94</sup>: Եթէ այս եւ 1280ի նուրայդին Քոթիթի համանման արձանագրութեան մէջ (այստեղ արդէն խօսւում է բաժի ու տաղմայի մասին)՝ նշում է միայն երիցանու հարկատուութիւնը, ապա Ս. Առաքելոցի 1289ի արձանագրութիւնը

չի ճշտուած: Աբու Սալիդի Անիում թողած 1330ի հրովարտակ-արձանագրութիւնը, որով փորձ է արւում սանձել հարկահաւաքների կամայականութիւնները կանխելու համար բնակչութեան լայնածաւալ արտադարձը, որեւէ ուղղակի նշում չի պարունակում այն մասին, որ այդ ժամանակ է քաղաքը արքունի սեփականութիւն դարձել (ՄՈՒՐԱԴԵՍՆ Պ., Հայատանի վրացերէն արձանագրութիւնները, էջ 58-59):

92. Դիւան..., էջ 1, հմտու. ՍԱՐԳԻՍԵԱՆԱՆ Ս., նշ. աշխ., էջ 15:

93. ԱԽԱԴԵՍՆ Ս., նշ. աշխ., էջ 14-18:

94. Դիւան..., էջ 24: 1269թ. Սահիպ Դիւանը կնութեան է առել աթարեկ Իւանէի որդի Աւագի դստերը՝ Խոչաքին, ուստի շատ հաւանական է, որ հենց այդ կապակցութեամբ էլ նոյն թուականին Անիի երիցանին ազտառել է բաժ հարկից:

95. Դիւան..., էջ 23 (Ս. Առաքելոց եկեղեցի):

գործերից մէկն էր դարձել երիցանու եւ աթոռի հարկատուութեան վերանայումը: «Ես պարոն Աղքուղայս որդի ամիջապասալար Շահնշահի, բռոն մեծին Զաքարիայի, եւ ես պարոն Թամարս, դուստր իշխանաց իշխանի պարոն Բուղդային, տեսաք զԱնոյ աքոռու եւ գիրիցանիս, որ հարկ կէր ի վերէնին, զոր մեք նախ...»<sup>96</sup>: Թէեւ արձանագրութեան շարունակութիւնը չի պահպանուել, բայց ակնյայտ է, որ այնտեղ խօսուելու է հարկի վերացման կամ առնուազն նուազեցման մասին: Եւ ահա եպիսկոպոսական աթոռի տնտեսական անկախութեան համար մղուած պայքարի յայտնի վերջին վկայութիւնը տեսնում ենք Յովհաննէս Ա. Եպիսկոպոսի ժամանակ գրուած արձանագրութեան մէջ, ուր նշում է, որ «յետոյ ի չարաց դրած» հարկը չափաւորում է բերուելով «յառաջին սահմանս»:

Յովհաննէս Ա.ից յետոյ մինչեւ ԺԴ. դարի վերջ՝ Անիի եպիսկոպոսների մասին այլեւս տեղեկութիւնների չենք հանդիպում: Դա ի հարկէ չի՝ նշանակում թէ եպիսկոպոսութիւնը դադարել էր գոյութիւն ունենալուց, պարզապէս աղքիւրներն են սակաւ ու աղքատիկ, իսկ քաղաքն ինքը անասելի հարկերի տակ կըուած եւ օտար իշխողների կամայականութիւններին ենթակայ, անկասելիօրէն դէպի անկում էր գնում:

Սակայն, բարեբախտաբար պահպանուել է Անիի վերջին եպիսկոպոսի Յովհաննէս Բ. Ոսկեփորիկի անունը, թերեւս չնորհիւ այն բանի, որ վերջինս եղել է նաեւ չնորհալի ու բաղմարդիւն գրիչ: Յայտնի է, որ Յովհաննէս Ոսկեփորիկը ԺԵ. դարի սկզբներին մի Աստուածաշունչ է ընդօրինակել Անիում (Վիեննայի Միհիթարեանների մատենադարան, թիւ 55), որի յիշատակարանում իրեն կոչում է «Յովհաննէս եպիսկոպոս, անպետ գրիչ Անոյ Անհանգիս», իսկ մինչ այդ, ԺԴ. դարի 80ական թուականներին մէկ ա'յլ Աստուածաշունչ է ընդօրինակել Միմէոն բարունապետի համար<sup>97</sup>:

Բայց Անիի այս վերջին եպիսկոպոսին վիճակուած չէր անխուզ ու հանգիստ պաշտօնավարել իր աթոռանիստում: ԺԵ. դարի սկզբներին արդէն հիմնական բնակչութիւնից դատարկըւած անին ապահով բնակատեղ չէր անգամ նրա եպիսկոպոսի համար: Եւ ահա 1423ին, Յովհաննէս Ոսկեփորիկին տեսնում ենք Սանահինի վանքում Յովհաննէս Սանահնեցու պատուէրով

96. Նոյն տեղում, էջ 22 (Ա. Առաքելոց եկեղեցի):

97. Յովհաննէս Ոսկեփորիկի կեանքի ու գրչական գործունէութեան մասին հանգամանօրէն տե՛ս ՄԱԹԵՒՍՈՒՍԱՆ Կ., Անիի եպիսկոպոս Յովհաննէս Ոսկեփորիկ գրիչը, «Էջմիածին», 1985, Լ, էջ 38-44:

մի Շարակնոց ընդօրինակելիս (*Մատենադարան*, թիւ 1587), իսկ 1426ին՝ Գուգարքում՝ Թմոք (Թմկաբերդ, Թմոգվի) ամրոցում՝ մէկ ա'յլ ձեռագիր գրելիս։ Այդ մատեանների յիշատակարաններում Յովհաննէսը շարունակում է իրեն կոչել «եպիսկոպոս Անոյ»<sup>98</sup>, բայց այդ ժամանակ արդէն նա Անիի եպիսկոպոսի կոչումը կրում էր աւելի շուտ որպէս պատուանուն։

Յովհաննէս Ուկեփորիկի մահուան ստոյգ թուականը յայտնի չէ, թէեւ ենթադրուել է 1432 թուականը<sup>99</sup>։ Նրանից յետոյ աղքակրներում այլեւս չենք հանդիպում Անիի եպիսկոպոսի ո'րեւէ յիշատակութիւն<sup>100</sup>, եւ դա բնական է, քանի որ Անին ինքն էլ դադարել էր գոյութիւն ունենալ, որպէս ապրող քաղաքը…։

Այսպիսով, անիի եւ Շիրակի եպիսկոպոսութիւնը հիմնուել է 1072ին, Բարսեղ Ա. Անեցու ձեռնադրութեամբ եւ յարատեւել մինչեւ ԺԵ. դարի սկզբները։ Մաղկման շրջանում, Անիի Աթոռը մեծ հեղինակութիւն ու կշիռ է ունեցել, կարգաւորել քաղաքի ներհամայնքային կեանքը, տէր եղել նիւթական մեծ միջոցների։ Սելջուկեան եւ մոնղոլական տիրապետութեան շրջանում, երբ քաղաքական, աշխարհիկ իշխանութիւնն անկայուն ու փոփոխական էր, Անիի եպիսկոպոսութիւնը կարեւոր դեր է կատարել քաղաքի ուլոյն դէմքը պահպանելու, նրա ներքին կեանքը կազմակերպելու գործում, յաճախ դարձել ողջ քաղաքային դասի պահանջների ու կամքի արտայայտիչը։

98. 1423ի Շարակնոցի յիշատակարանում Յովհաննէս Սահանեցին անեցի գրչին մեծարում է նշելով «...ետու գրել Յովհանելու արքեպիսկոպոսի, մականուն Ուկեփորիկ Վերաձայնելոյ՝ շնորհազարդի եւ նարտար գրչի»։ ԽԱԶԻԿՆԱՆ Լ., ԺԵ. դարի հայերէն ձեռագիրի յիշատակարաններ, մասն Ա., Երեւան, 1955, էջ 303։
99. Այդ թուականը Լ. Խաչիկեանը Յովհաննէսի մահուան տարին է համարում, ելնելով Կարապետ Աղթամարցու Տիղիսում գրած յիշատակարանից, ուր նշւում է, որ այդ ժամանակ մահացել են պարոն Փաշի որդիներ պարոն Զալաբեն եւ «արհեսպիսկոպոսն տէր Յովհաննէս», ԺԵ. դարի յիշատակարաններ, էջ 420-421, 756։
100. Հաստ Հ. Ղ. Ալիշանի ԺԵ. դարի կէսերին՝ 1653ին, Հոռոմոսի վանահայր Յովհաննէսը յիշատակարաններից մէկում իրեն կոչում է «եպիսկոպոս Անոյ վիճակիս», որից նա ենթադրում է, թէ Անիի անկումից յետոյ Անիի եպիսկոպոսի կոչումը անցել է Հոռոմոսի վանքի առաջնորդներին։ ԱԼԻ-ՇԱՆ Հ. Ղ., նշ. աշխ., էջ 98։ Սակայն, այդ ենթադրութեան օգտին խօսող ա'յլ փաստեր չկան։ Աւելին, 1485ին Հոռոմոսի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս չկանուած է, 1585ին՝ Յովհաննէս եպիսկոպոսը, 1685ին՝ Դանիէլ Տիգրանակոպոսը, 1751ին՝ Աւետիք եպիսկոպոսը, 1751-55ին՝ Եղիա Ալաշկերտցին, 1788ին՝ Յովհաննէս Շամբեցին եւ ուրիշներ՝ իրենց անիի եպիսկոպոսուն չեն կոչում։

Անիի եպիսկոպոսները քաղաքի եկեղեցիներից բացի՝ ուշադրութեան կենտրոնում են պահել Անիի մերձակայ վանքերը, օժանդակել նրանց, միաժամանակ պարբերաբար զբաղութել են օրինաստեղծ աշխատանքով զանազան կանոնական արձանագրութիւնների միջոցով կարգաւորելով հասարակական կեանքի խնդիրները՝ ըստ ժամանակի պահանջների:

Սկզբնական շրջանում, Անիի եպիսկոպոսներ են եղել Պահաւատունիների հետ խնամիացած Ապիրատեան տան ներկայացուցիչները (Բարսեղ Ա., Բարսեղ Բ., Սարգս Ա.), այնուհետեւ եպիսկոպոսութիւնը վարել են Պահաւատունեաց տան Վահրամ սպարապետի տոհմաճիւղից սերող հոգեւորականները (Գրիգոր Ա. [Մագիստրոս], Սարգս Բ., Գրիգոր Բ., Յովհաննէս Ա.): Նշուած տոհմերի ներկայացուցիչներից բացի՝ Անիի եպիսկոպոս են եղել Ամիր Երկաթի որդի՝ Բարսեղ Գ.ը, Միհթար Տեղերցին, Վարդանը, Յովհաննէս Բ. Ուկեփորիկը: Առկայ փաստերը ցոյց են տալիս, որ Անիում միաժամանակ գոյութիւն է ունեցել քաղաքի հոգեւոր առաջնորդ եւ քաղաքի ու գաւառի երիցապետ եպիսկոպոս, այսինքն բարձրագոյն հոգեւոր իշխանութիւնն ունեցել է երկու գլխաւոր օղակ:

Անիի եպիսկոպոսութիւնը քաղաքի պատմութեան մէջ պակաս դեր չի կատարել, քան նրա աշխարհիկ իշխանութիւնը: Աւելին, եթէ քաղաքական իշխանութիւնը յաճախ անցել է օտարներին եւ բազում չարիքների պատճառ դարձել, ապա հոգեւոր իշխանութիւնը, թէկուզ սեփական շահերից ելնելով, փորձել է դիմակալել արտաքին ճնշման, բնակչութիւնը զերծ պահել ուժացումից ու համընդհանուր ընչազրկումից: Յատկանշական են Յովհաննէս Ա.ի մասին պահպանուած կցկտուր տեղեկութիւնները, որոնցից երեւում է, որ նա փորձել է մեղմել տիրող ծանր կացութիւնը: Իսկ յանձինս Անիի վերջին եպիսկոպոսի՝ Յովհաննէս Ուկեփորիկի արդէն տեսնում ենք մի տքնաջան հոգեւոր գործչի, որն ամայացող քաղաքում ինքն էր գրիչ առել ու Սուլր Գիրքն ընդօրինակում, նաև գրչութիւն ուսուցանում այլոց, որպէսզի վառ պահի իր նօրացած հօտի հաւատքը եւ նրան վերադարձնի ապրելու ու մաքառելու յոյսը:

Վերջում, որպէս Անիի եպիսկոպոսների մասին պահպանուած տեղեկութիւնների ամփոփում ներկայացնում ենք նրանց գաւազանագիրքը: Քանի որ Անիի աթոռի պատմութեան առանձին ժամանակաշատուածներում գործ ունենք երկու եպիսկոպոսների գոյութեան փաստի հետ, այն աւելի ակնառու դարձնելու համար ցանկն օժտում ենք լրացուցիչ տեղեկութիւններով: Անուան արձանագրումից յետոյ նշում ենք իւրաքանչիւր եպիս-

կոպոսի յիշատակման թուականը, յիշատակման բնագրային ձեւը եւ վայրը կամ սկզբնաղբիւրը։ Անթուական յիշատակութիւններից բերում են առաւել կարեւորները։

Ամբողջական գաւազանագրքից բացի՝ ներկայացնում ենք նաև Անիի հիմնական եպիսկոպոսական տնեղի՝ Ապիրատեան եւ Պահաւունի եպիսկոպոսների մեր կազմած տոհմածառը (Պահաւունեաց տան բոլոր ճիւղերը չենք նշում, քանի որ մեր նպատակը միայն Անիի եպիսկոպոսների ծագումը ցոյց տալն է)։

65

## ԳԱԻԱԶԱՆԱԳԻՐՔ

### ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԱՆԻՈՅ

#### ԲԱՐՍԵՂ Ա. ԱՆԵՑԻ

1072 Տէր Բարսեղ արքեպիսկոպոս Անոյ եւ Տանն Շիրակաւանոյ (Յայսմաւուրք)։

1081\* ... արքեպիսկոպոսն Շիրակայ... տէր Բարսեղ (Ուռհայեցի)։

1113 Մեռաւ տէր Բարսեղն եւ թաղեցաւ ի Շուղըն մեծ հանդիսիւ... (Ուռհայեցի)։

#### ԲԱՐՍԵՂ Բ. ԱՆԵՑԻ

1160 ի հայրապետութեանն տէր Բարսեղի (Անի, պարսպի բուրք)։

1174 ի հայրապետութեան նահանգիս մերում տէր Բարսեղի (Հոռոմոս)։

\* Այս թուականին Բարսեղը հաղբատում ձեռնադրուեց կաթողիկոս եւ մինչեւ իր մահը բազմաթիւ անգամ յիշում է, «կաթողիկոս» եւ «հայրապետ» կոչումով։ Ցանկը չծանրաբեռնելու համար այդ վկայութիւնները դուրս ենք թողնում։

1177 Բասիլ եպիսկոպոս որ յարեւելս հիւսիսոյ (Թուղթ ...  
առ Գրիգոր Տղայ) :

1179 Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին  
Անոյ (Հոռոմկայի ժողով) :

1181 Ի հայրապետութեան տէր Բարսղի (Հոռոմոս, Յով-  
հաննէս գրիչ) :

1184 Շնորհիւն Աստուծոյ ես տէր Բարսեղ... (Խաչքար  
Անի Ս. Առաքելոցի մօտ) :

1187 Ի հայրապետութեան մեծարդոյ եւ հոչակաւոր առնն  
Աստուծոյ տեառն Բարսղի (Հոռոմոս, Յովհաննէս գրիչ) :

1191 Կամաւն Աստուծոյ ես տէր Բարսեղ (Լմբատավանք) :

1193 Յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Բարսղի  
Հայոց կաթողիկոսի (Անի Ս. Փրկչի եկեղեցի) :

1195 Ի ...յառաջին ամի կաթողիկոսութեան տեառն Բարսղի  
(Հոռոմոս) :

1199 Ի հայրապետութեան տէր Բարսղի... (Հոռոմոս) :

## ՍԱՐԳԻՍ Ա.

1187 Ի հայրապետութեան ...տեառն Բարսղի եւ եղբաւր-  
որդոյ նորա աստուածարեալ մանկագոյն քահանայի Սարգսի  
(Հոռոմոս, Յովհաննէս գրիչ) :

1208 Սարգս աթոռակալ Անոյ (Լոռի ժողով, Գանձա-  
կեցի) :

1209 Ի յամս աստուածապատիւ տեառն Սարգսի՝ որդոյ  
Ապիրատին... (Բագնայր) :

1210 Ի յամս աստուածարեալ եւ մեծարդոյ տեառն Սարգսի՝  
վերաղիտողի մայրաքաղաքին Անոյ... (Բագնայր) :

1211 Ի յամս աստուածապատիւ տեառն Սարգսի՝ որդոյ  
Ապիրատին... (Բագնայր) :

## ԳՐԻԳՈՐ Ա. (ՄԱԳԻՍՏՐՈՍ)

1213 ...ընծայեցի յԱրջու Առճի ի Սուրբ Աստուածածինս ի  
ձեռն տէր Գրիգորի՝ որդոյ Ապուղամրի... (Արջո Առճան) :

1215 Կամաւ Հոգոյն Սրբոյ ես տէր Գրիգոր ի մեր սեփական  
ուխտո... (Բագնայր) :

Ի յամս աստուածապատիւ հոգեւոր տեառն Գրիգորոյ՝ որ-  
դոյ Ապուղամրի (Բագնայր) :

1216 Շնորհիւն Աստուծոյ ես տէր Գրիգոր՝ որդի Ապուղամրի ժառանգորդ սեպհական հայրենի Աթոռոյս մայրաքաղաքիս Անւոյ արհիշպիսկոպոս այսմ նահանգի... (Անիի Ս. Առաքելոց):

1217 Կամաւքն Աստուծոյ ես տէր Գրիգոր որդի Ապուղամրի, արհիշպիսկոպոս... (Անիի Ս. Առաքելոց):

1218 Ես տէր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս (Անիի Վրացական եկեղեցի):

1220 Շնորհիւն Աստուծոյ ես տէր Սարգիս՝ որդի Ապիրատին, առաջնորդ մայրաքաղաքիս Անւոյ... (Անիի Ս. Առաքելոց):

1225 ...տէր Գրիգորոյ արհիշպիսկոպոսի... (Մարմաշէն):

1226 Ես տէր Գրիգորոյ... (Անիի Ս. Սարգիս):

1227 Կամաւն Աստուծոյ ես տէր Գրիգոր արհիշպիսկոպոս մայրաքաղաքիս Անոյ եւ ժառանգորդ սեփիական հայրենի Աթոռոյս մերոյ (Անիի Ս. Առաքելոց):

## ԲԱՐՍԵՂ Գ.

1229 Յառաջնորդութեան տէր Բարսղի որդւոյ Ամրի Երկաթայ (Հոռոմոս):

1231 ... յառաջնորդութեանս (Հոռոմոսի վանաց) տէր Բարսղի արհիշպիսկոպոսի՝ որդոյ Ամրի Երկաթայ (Հոռոմոս):

1232 Ի տէրութեան տեղւոյն (Բազնայրի) տեառն Գրիգորայ որ Մագիստրոսն ասի, վերագիտող Աթոռոյս Անւոյ (Հոռոմոս, Իգնատիոս գրիչ):

1233 Ի տէրութեան տեղւոյս Գրիգորի Մագիստրոսի որդոյ Ապուղամրի (Բազնայր):

## ԱՆԹՈՒԱԿԱՆՔ

Մօտ 1213-16ին հրամանաւ տեառն Գրիգորոյ եպիսկոպոսի, որ էր ժառանգորդ Սուկր Ուկստիս (Արջոյ Առիճ):

Ես տէր Գրիգոր, որդի Ապուղամրի Անւոյ եպիսկոպոս... (Լբատավանք):

Մինչեւ 1225 ... այս մեր արձան անջնջելի եւ յիշատակ մշտնջենաւոր տեառն Գրիգորոյ արհիշպիսկոպոսի մայրաքաղաքին Անւոյ եւ նահանգին Շիրակայ, ժառանգորդ եւ սեփական մերոյ Աթոռոյս... (Լբատավանք):

Այս արձան մշտնջենաւոր Գրիգորոյ որդոյ Ապուղամրի (Մարմաշէն):

*Մաքիստրոսն Գրիգոր... ընդ հովանեաւ... (Մարմաշինոյ) ինքն եւ եղբայր իւր Խարիֆ կան հանգստարանի... (Անիի Ս. Առաքելոց):*

*1239 Շնորհիւն Աստուծոյ ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ առաջնորդ մայրաքաղաքիս Անոյ... (Անիի Ս. Առաքելոց):*

## ՍԱՐԳԻՍ Բ.

*1245 ...եպիսկոպոսն Անւոյ Սարգիս (Գանձակեցի):*

*1246 ...յառաջնորդութեան (Հոռոմոսի) տեառն Բարսեղի արքեպիսկոպոսի՝ որդոյ Ամիր Երկաթայ (Հոռոմոս):*

*1247 ...յառաջնորդութեան (Հոռոմոսի) տեառն Բարսեղի, որդոյ Ամիր Երկաթայ... (Հոռոմոս):*

*1250 ...յառաջնորդութեան (Հոռոմոսի) տեառն Բարսեղի արքեպիսկոպոսի, որդոյ Ամիր Երկաթայ... (Հոռոմոս):*

*1251 ...յառաջնորդութեան (Հոռոմոսի) տեառն Բարսեղի (Հոռոմոս):*

*1253 Առաջնորդ վանացս տէր Բարսեղ (Հոռոմոս):*

*1262 Ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի, տեառն տեղւոյս... (Բագնայր):*

## ԱՆԹՈՒԱԿԱՆՔ

*1260-70ական թուականներին.*

*Ես տէր Սարգիս, որդի Մաքիստուսին... (Անիի Ս. առաքելոց):*

*Շնորհիւն Աստուծոյ ես տէր Սարգիս եպիսկոպոս... (Անիի Ս. Առաքելոց):*

*Շնորհիւն Աստուծոյ ի տէրութեան քաղաքիս եւ յառաջնորդութեան տէր Սարգսի... (Անիի Ս. Առաքելոց):*

## ՄԽԻԹԱՐ ՏԵՂԵՐՑԻ

*Անքուական.*

*Ես Միկիթար եպիսկոպոս Տեղերէցի (Անիի Ս. Առաքելոց):*

ԳՐԻԳՈՐ Բ.

1277 Շնորհիւն Աստուծոյ ես տէր Գրիգոր արքեպիսկոպոս մայրաքաղաքիս Անոյ... (Անիի Ս. Առաքելոց):

Անթուական. ես տէր Գրիգորս եղբաւրորդի տեառն Սարգսի (Մարմաշէն):

1298 ...ի քաղաքիս Անի... յեպիսկոպոսութեան տեառն Յոհաննիսի... (Անիի Ներքին բերդ, Եղբայրիկ գրիչ):

## ՎԱՐԴԱՆ

1307 Վարդան եպիսկոպոս Անոյ (Սսի ժողով, Կալանոս):

1308 ...ի Հայրապետութեան մերոյ նահանգիս Շիրակ գաւառիս՝ հեզի եւ մարդասիրի տէր Յոհաննիսի՝ որդոյ Ապուղամրի՝ իշխեցող տեղոյս... (Բագնայր):

1313 ...ի Հայրապետութեան մայրաքաղաքիս Անոյ տեառն Յոհաննիսի մեծի, որ է ջահ վառեալ ի մէջ եկեղեցւոյ եւ ի յազգէ Լուսաւորչին Հայաստանեայց (Շիրակի Մագլոյս բնակավայր):

Անթուական. ... յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի... (Անիի գլխաւոր մուտք):

1320 ի Հայրապետութեան ի տէր Վարդան... (Մրեն):

## ՅՈՎՃԱՆՆԻՍ Բ. ՈՍԿԵՓՈՐԻԿ

ԺԴ. դարի 80ական թուականներին.

...զանիմաստ ծրող սորին զՅովհաննէս եպիսկոպոս Անոյ (Անի):

ԺԵ. դարի սկիզբ

...զՅովհաննէս եպիսկոպոս Անոյ վիճակիս... զՅովհաննէս եպիսկոպոս անպէտ գրիչ Անոյ նահանգիս (Անի):

1423 ...գրիչ Յովհաննէս եպիսկոպոսի Անոյ յիշեսջիք...

Յովհաննէս արքեպիսկոպոսի, մականուն Ուսկեփորիկ վերաձայնելոյ... (Սանահին):

1426 ...գրեցաւ... ձեռամբ մեղապարտ գրչի Անոյ եպիսկոպոսի տէր Յովհաննիսի (Թմոք ամրոց):

1443 ...աղաչեմ յիշել ի Տէր Յովհաննէս եպիսկոպոս՝ մականուն Ուսկեփոր, որ է ուսուցիչ մեր այսմ գործոց... (Արագածոտն, Սերկեւիլի գիւղ, Ոհաննե Թմոքեցի):

(Ծար. 2 եւ վերջ)

ՄԱԹԵՒՈՍԵԱՆ ԿԱՐԵՆ